**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

29 ապրիլի 2021 թ. N 397-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ «2021» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. 2021 թվականի մայիսի 10-ից կիրառության մեջ դնել Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2021» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**